# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2262-Ա « 06 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի Հ.2515-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Նարգիզ Կակոյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2020 թվականի օգոստոսի 20-ի հ.2515-Ա որոշման մեջ անվանափոխություն կատարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի հ.4778 և սեփականության իրավունքի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի հ.4777 վկայագրերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ Հաղթանակ տեղամասի հ.169-1 հասցեում գտնվող հողամասը գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 3-րդ հոդվածով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 18.03.2025թ. հ.Դ-26051-25 եզրակացությունը.

1.Երևանի քաղաքապետի 2020 թվականի օգոստոսի 20-ի «Հաղթանակ տեղամասի հ.169-1 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» հ.2515-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Նախաբանում՝ «Մարտիկ Հակոբյանի լիազորված անձ Հենրիկ Հակոբյանի» բառերը փոխարինել «Նարգիզ Կակոյանի» բառերով, իսկ «Մարտիկ Հակոբյանին պատկանող» բառերը՝ «ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2023 թվականի դեկտեմբերի տասնհինգի հ.4778 և սեփականության իրավունքի 2023 թվականի դեկտեմբերի 15-ի հ.4777 վկայագրերի հիման վրա իրեն պատկանող» բառերով.

2) նախաբանի 3-րդ պարբերությունում՝ «գտնվում է Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 8-րդ գոտում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի՝ գտնվում է 9-րդ գոտում» բառերը:

2. Հաղթանակ տեղամասի հ.169-1 հասցեում գտնվող 2600.0քմ մակերեսով հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով՝ չեղյալ համարելով Երևանի քաղաքապետի 2020 թվականի օգոստոսի 20-ի հ.2515-Ա որոշման հիման վրա 2021 թվականի ապրիլի 9-ին թողարկված հ.336-2021 հատակագիծը:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահավում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**